



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ**

N 670 - Ա

30 նոյեմբերի 2021 թ.

**ԱԴԱՄԻԿ ՓԻՆԱԶՅԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ
ՄԱՐԶԻ ԵՐԵՆՈՍ ԳՅՈՒՂԻ N 1 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴԴՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված 44-րդ կետի պահանջը, «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Երանոս գյուղի N 1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի նիստի 2021 թվականի նոյեմբերի 25-ի N 6 արձանագրությունն ու Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներկայացուցչի եզրակացությունն, ինչպես նաև Ադամիկ Փինաչյանի անձնական դիմումը

որոշում եմ՝

1. Ադամիկ Փինաչյանին 2021 թվականի նոյեմբերի 30-ից նշանակել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Երանոս գյուղի N 1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն՝ կնքելով աշխատանքային պայմանագիր՝ հինգ տարի ժամկետով:

ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

30.11.2021



Подписано: NAWOYAN RUBIK 3708540077

Ռ. ՆԱՎՈՅԱՆ
ք. Գավառ